ԳԻՏԵԼԻՔ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Երևանի տարածաշրջանային թիվ2 պետական քոլեջի կարիերայի կենտրոնը ստեղծվել է 2012թ. սեպտեմբերի 1-ին: Կենտրոնի խորհրդատուներն են Լիանա Ամիրաղյանը և Արփիևե Թորոսյանը: Կենտրոնը գործում է Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի և ՀՀ ԿԳՆ համատեղ մշակած կանոնադրության հիման վրա: Կենտրոնի աշխատակիցները յուրաքանչյուր տարի անցնում են վերապատրաստման դասընթացներ: Իր գործունեության ընթացքում կարիերայի կենտրոնը հասցրել է կատարել բազմաթիվ աշխատանքներ:

Կենտրոնն իր աշխատանքային գործունեությունը սկսում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ից՝ նախապես մշակված ամենամյա աշխատանքային պլանի հիման վրա: Յուրաքանչյուր կիսամյակ կարիերայի կենտրոնը կնքում է պայմանագրեր գործատուների հետ, որոնց արդյունքում քոլեջի 3-րդ և 4-րդ կուրսեի ուսանողներն իրենց ուսումնական և արտադրական պրակտիկաներն են անցկացնում կազմակերպություններում: Լավագույն ուսանողները մնում են աշխատանքի այդ կազմակերպություններում: Պրակտիկաների ավարտին կենտրոնի աշխատակիցները ստուգում են ուսանողների գնահատականները, մատենավարության ճիշտ կազմակերպումը:

Կարիերայի կենտրոնի միջոցով 3 տարվա ընթացքում աշխատանքի են ընդունվել շուրջ 100 ուսանողներ՝ տարբեր բնագավառներում, իսկ շուրջ 300 ուսանողներ աշխատանք են գտել կենտրոնի կազմակերպած դասընթացների, սեմինար-հանդիպումների, աշխատանքի տոնավաճառների, էքսպո-ցուցադրությունների միջոցով:

Քոլեջում սովորող ուսանողների և կարիերայի կենտրոնի կապը ամուր է և մշտական: Կարիերայի կենտրոնն ունի առանձին սենյակ՝ կահավորված անհրաժեշտ գույքով: Սենյակում մշտապես անհատական և խմբային հանդիպումներ են կազմակերպվում քոլեջի ուսանողների հետ՝ նրանց աշխատանքային, ուսումնական և այլ հարցերը քննարկելու նպատակով:

Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ քոլեջում կազմակերպվում են վարպետաց դասեր՝ հայտնի մասնագետների կողմից, որի արդյունքում ուսանողների տեսական գիտելիքներն ավելի են ամրապնդվում: Քոլեջում կազմակերպվում են նաև ամենամյա հանդիպումներ Նոր Նորք համայնքի ղեկավարության հետ՝ ուսանողներին հետաքրքրող համայնքային հարցեր քննարկելու նպատակով:

Կարիերայի կենտրոնի աշխատակիցները շրջայցեր են կազմակերպում Երևան քաղաքի դպրոցներում, ներկայացնում քոլեջի աշխատանքը, մասնակցում են քոլեջի ընդունելությանը, մասնագիտական կողմնորոշում կատարում ապագա ուսանողների համար:

Ուսումնական տարիների ընթացքում ուսանողների համար կազմակերպվում են սեմինարներ «Ինչպես գրել մրցունակ կենսագրական», «Ինչպես փնտրել աշխատանք», «Ինչպես ներկայանալ հարցազրույցի» և նմանատիպ այլ թեմաներով:

Մասնագիտությունը	Կրթության հենքը
Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ	հիմնամյա-3տարի միջնակարգ-2տարի
Մենեջմենթ	հիմնամյա-3տարի
Մարքեթինգ	հիմնամյա-3տարի միջնակարգ-2տարի
Ապահովագրական գործ	հիմնամյա-3տարի միջնակարգ-2տարի
Սպ. կազմակերպում հյուրանոցներում և զբոս. համալիրներում	հիմնամյա-4տարի միջնակարգ-3տարի
Հանրային սննդամթերքի տեխնոլոգիա	հիմնամյա-3տարի 6ամիս միջնակարգ-2տարի 6ամիս

Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Նոր Նորքի Մոլդովական 37Ա
Հեռախոսներ՝ 010 672301, 672790, 093 930708, 077706050
Կայք՝ www.college2.info, Էլ. փոստ՝ N2college@mail.ru

Գրականության դասը անընդհատ շփում է արվեստի հետ: Այն միշտ էլ ներքին մեծ խորհուրդ ունի. բացի գրականության՝ որպես գիտության, գաղտնիքներին ծանոթանալը, նաև անմիջական հաղորդակցում է արվեստներից ամենամեծի, ամենամարդկայինի և ամենագեղեցիկի հետ, որ մարդու մասին է և մարդու՝ մարդ լինելու համար... Թերևս հենց այդ պատճառով էլ գրականության դասախոսի դերը առավել պատասխանատու է, իսկ առարկան ավանդելու ձևերը՝ ավելի առանձնահատուկ:

«Գրքեր՝ ուսանողների ձեռքերով»

Քոլեջում մեծ պատասխանատվությամբ են մոտենում հայ գրականության դասավանդմանը. արդեն քանի տարի ուսանողները սովորում են քոլեջի դասախոսների պատրաստած ***«Հայ գրականություն»*** ձեռնարկով, տեղի են ունենում մեծ թվով բաց դասեր, գրական-երաժշտական ցերեկույթներ, ընթերցումներ, գրքերի քննարկումներ, ուսանողների հեղինակած ստեղծագործությունների և շարադրությունների մրցույթներ:

Այդ շարքում իր յուրահատկությամբ առանձնանում է քոլեջի սաների յուրօրինակ ու հետաքրքիր նախաձեռնությունը. հեղինակների ստեղծագործություններին ծանոթանալուց հետո ուսանողները ինքնուրույնաբար լրացրել են իրենց գիտելիքները՝ ստեղծելով հեղինակային գրքեր՝ նվիրված ***Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Համասդեղի և Վ. Մարոյանի*** կյանքին ու ստեղծագործությանը: Նրանք գրքերի մեջ ներառել են այդ մեծերի կյանքի քիչ հայտնի և հետաքրքիր դրվագները, տարբեր ստեղծագործություններից հատվածներ և գրականագիտական վերլուծություններ, ասույթներ և հուշեր գրողների մասին, նաև՝ նրանց թևավոր խոսքերը:

Նմանատիպ ձեռնարկումները մեծապես խթանում են ուսանողների ինքնուրույն աշխատանքը և խոսում դասավանդողների մասնագիտամանկավարժական հմտության ու պատշաճ մակարդակի մասին:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Երևանի տարածաշրջանային թիվ2 պետական քոլեջի կարիերայի կենտրոնը ստեղծվել է 2012թ. սեպտեմբերի 1-ին: Կենտրոնի խորհրդատուներն են Լիանա Ամիրաղյանը և Արփինե Թորոսյանը: Կենտրոնը գործում է Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի և ՀՀ ԿԳՆ համապետ մշակած կանոնադրության հիման վրա: Կենտրոնի աշխատակիցները յուրաքանչյուր տարի անցնում են վերապատրաստման դասընթացներ: Իր գործունեության ընթացքում կարիերայի կենտրոնը հասցրել է կատարել բազմաթիվ աշխատանքներ:

Կենտրոնն իր աշխատանքային գործունեությունը սկսում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ից՝ նախապես մշակված ամենամյա աշխատանքային պլանի հիման վրա: Յուրաքանչյուր կիսամյակ կարիերայի կենտրոնը կնքում է պայմանագրեր գործատուների հետ, որոնց արդյունքում քոլեջի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողներն իրենց ուսումնական և արտադրական պրակտիկաներն են անցկացնում կազմակերպություններում: Լավագույն ուսանողները մնում են աշխատանքի այդ կազմակերպություններում: Պրակտիկաների ավարտին կենտրոնի աշխատակիցները ստուգում են ուսանողների գնահատականները, մատենավարության ճիշտ կազմակերպումը:

Կարիերայի կենտրոնի միջոցով 3 տարվա ընթացքում աշխատանքի են ընդունվել շուրջ 100 ուսանողներ՝ տարբեր բնագավառներում, իսկ շուրջ 300 ուսանողներ աշխատանք են գտել կենտրոնի կազմակերպած դասընթացների, սեմինար-հանդիպումների, աշխատանքի տոնավաճառների, էքսպո-ցուցադրությունների միջոցով:

Քոլեջում սովորող ուսանողների և կարիերայի

կենտրոնի կապը ամուր է և մշտական: Կարիերայի կենտրոնն ունի առանձին սենյակ՝ կահավորված անհրաժեշտ գույքով: Սենյակում մշտապես անհատական և խմբային հանդիպումներ են կազմակերպվում քոլեջի ուսանողների հետ՝ նրանց աշխատանքային, ուսումնական և այլ հարցերը քննարկելու նպատակով:

Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ քոլեջում կազմակերպվում են վարպետաց դասեր՝ հայտնի մասնագետների կողմից, որի արդյունքում ուսանողների տեսական գիտելիքներն ավելի են ամրապնդվում: Քոլեջում կազմակերպվում են նաև ամենամյա հանդիպումներ Նոր Նորք համայնքի ղեկավարության հետ՝ ուսանողներին հետաքրքրող համայնքային հարցեր քննարկելու նպատակով:

Կարիերայի կենտրոնի աշխատակիցները շրջայցեր են կազմակերպում Երևան քաղաքի դպրոցներում, ներկայացնում քոլեջի աշխատանքը, մասնակցում են քոլեջի ընդունելությանը, մասնագիտական կողմնորոշում կատարում ապագա ուսանողների համար:

Ուսումնական տարիների ընթացքում ուսանողների համար կազմակերպվում են սեմինարներ «Ինչպես գրել մրցունակ կենսագրական», «Ինչպես փնտրել աշխատանք», «Ինչպես ներկայանալ հարցազրույցի» և նմանատիպ այլ թեմաներով:

Շրջանավարտների շարունակական կրթության փաստաթղթերի ձևակերպումը ևս կատարում է կարիերայի կենտրոնը: Կենտրոնի աշխատակիցները մասնակցում են ընդունելությանը՝ դիմորդներին մասնագիտական կողմնորոշում ցույց տալու նպատակով:

Ուսանողական Հասարակական կազմակերպություն

Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջում սովորում է շուրջ 600 ուսանող, ովքեր ծավալում են տարրաբնույթ ու բազմաբովանդակ գործունեություն: Ուսանողության առավել ակտիվ մասը մշտապես ներկայացնում է հետաքրքիր գաղափարներ, մտահղացումներ, ուսումը և դաստիարակությունը սերտորեն շղթայելու, ուսանողական կյանքը հագեցած ու հետաքրքիր կազմակերպելու համար: Քոլեջի ներքին հասարակական կյանքը անհրաժեշտ էր հասանելի դարձնել ողջ ուսանողությանը, ներգրավել նրանց և դասախոսական ներուժը՝ ծավալած աշխատանքները ճիշտ ուղղորդելու, նպատակային խնդիրները առանձնացնելու, հետաքրքիր լուծումներ և մոտեցումներ մշակելու համար:

Եվ ներքին, և՛ արտաքին հասարակական կյանքը բովանդակալից դարձնելու համար արդի մտածողությամբ և նորարարական գաղափարներով տոգորված ուսանողները որոշեցին ստեղծել հասարակական կազմակերպություն:

2014թ. նոյեմբեր ամսին անկախ ուսանողները աշխարհայացքով, աշխարհընկալմամբ, հետաքրքրությունների լայն շրջանակով ու մտահորիզոնով համախմբվեցին նույն գաղափարի շուրջ և ոգևորությամբ ու խանդավառությամբ հիմնադրեցին ՈՒՀԿ-ն (նախագահ՝ Ազատ Օհանյան): Հիմնադրման օրից կազմակերպությունը տարբեր

ուղղություններով աշխատանքի բաժանում կատարեց, հանձնարարություններ տվեց՝ մշակելու և ներկայացնելու ուսանողական գործունեության ստույգ ծրագիր, ընտրել գործունեության ոլորտները, կարևորագույն հիմնախնդիրներն ու նպատակները դարձնել իրագործելի, արդյունքում ունենալ ուղղորդված աշխատանքային պլան:

Կազմակերպության գաղափարական նպատակը ստեղծագործական ներուժով և մտածողությամբ ուսանողներին ոգևորելն էր, առաջադրված նախագծերը և մոտեցումները իրագործելը: Հատկացված տարածքը սեփական ուժերով վերանորոգելուց ու ձևավորելուց հետո կազմակերպությունը քայլ առ քայլ սկսեց իրականացնել նախատեսված աշխատանքները: Առաջին միջոցառումը երկրաշարժի 27-րդ տարելիցին նվիրված լռության օրն էր, որը ուսանողներին ներգրավեց բազմատեսակ աշխատանքներում՝ հետազոտականից մինչև անկյունի ձևավորումը, գեղարվեստական միջոցառումն ու մոմավառությունը: Հաջորդող միջոցառումները՝ «Ուրախ ամանոր», շախմատի մրցաշար, ասմունքի օլիմպիադա, «Ինչ, որտեղ, երբ» ինտելեկտուալ խաղ, անմոռուկների պատրաստում, անվճար մասնագիտական խմբակներ, կարիերայի կենտրոնի հետ համատեղ մասնագիտական դասընթացների կազմակերպում դպրոցներում, համախմբեցին ուսանողներին, մշակեցին ուսանողական համոզմունք, ձևավորեցին նոր հետաքրքրություններ, արժևորեցին սեփական ուժերը գնահատելու կարողությունը:

ՈՒՀԿ-ն քոլեջում նույն ոգևորությամբ շարունակում է աշխատանքը, արձագանքում ուսանողական և հասարակական բազմապիսի հարցերի, իրականացնում հետաքրքիր գործունեություն, իր շարքերը համալրում նոր անդամներով, առաջադրում նոր գաղափարներ ու մտահղացումներ:

«Հեղինակային պատկերասրահ»

Անհրաժեշտ է վառ պահել հանճարների հիշատակը, անհրաժեշտ է ո՛չ նրանց, այլ մեզ...

«Պատմում են, որ Ալֆրեդ դը Մյուսեն հարբած ընկած է եղել Փարիզի փողոցներից մեկում, ու մի ծաղկավաճառ ֆրանսուհի գեղեցիկ բարձրացրել ու տուն է տարել նրան՝ փրկելով հասարակության սպանիչ ծաղրից: Ու ֆրանսիացիք էլ արձանն են կանգնեցրել այդ մանկահասակ ֆրանսուհու:
Ես ցանկանում եմ մորս այդպիսին տեսնել՝ հայոց բնաշխարհիկ կնոջ համբերատարությամբ, իր միակ աշխարհն իր մեջ՝ մենք՝ նրա դուստրերը՝ Արփենիկ ու Անահիտ, ու մի ամբողջ մոլորակ՝ բանաստեղծ ամուսինը...»:

Արփենիկ Չարենցի այս հուշով սկսվեց «Հեղինակային պատկերասրահ» խորագիրը կրող բաց դասը:

Դասին մասնակցում էին քոլեջի տարբեր կուրսերի ուսանողներ, ովքեր հայ դասականներին ներկայացրեցին յուրովի ու ինքնատիպ մոտեցմամբ: Խոնարհման ու պատվի արժանացրին աննպաստ ժամանակներում ընդդեմ խավարի լույսը փառաբանողին... Թող Եղիցի՛ լույս...
Սարոյանական ազնվաբարո աշխարհից առինքնող ձայնը լսելի դարձավ՝ բարին փնտրել ամենուրեք: Բարին ծվարել էր զանգեզուրյան կիրճերից մեկում, ուր պարզ ու իմաստուն, հողագործ ու հողաբույր մարդիկ սպասում էին, սպասում էին, որ մտնեն բանաստեղծության մեջ:

Անիի սրբազան ավերակներից քիչ հեռու բանաստեղծ դարձած Իսահակյանի ու Շիրազի ոսկեբառ լեզու-բերանով խոսեցին՝ հավատալով, որ նրանց խոսքը կմտնի մեր դռնից ու լուսամուտներից ներս, ինչպես ամեն առավոտ՝ առավոտի լույսը...
Ուշագրավ էին ուսանողների ստեղծած՝ հեղինակին

ներկայացնող, նրա ստեղծագործությանը բնորոշ ցուցապաստառները:

Ներկայացվող նյութերն իրենց մեջ կրում էին հուշող տարբեր, բայց ոչ՝ ուղղակի խոսք: Տեղեկությունները տրված էին միջնորդավորված ձևով, ինչը պահանջում է ստեղծագործական միտք, երևակայություն, հնարամտություն:

Ներկաները լսում և փորձում էին կռահել, թե որ հեղինակի ու ստեղծագործության շուրջ է աշխատել տվյալ խումբը:

Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ

«Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» անվանումով հեռուստախաղը ծագել է դեռևս 1975 թվականին, երբ սեպտեմբերի 4-ին խորհրդային հեռուսատեսությամբ երկու ընտանիք հեռուստաէկրանից այն կողմ իրար հետ մրցեցին տարբեր բնույթի ինտելեկտուալ հարցերին արագ ու ճիշտ պատասխանելու հմտության մեջ: Կարճ ժամանակ անց «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»-ը դարձավ նախկին ԽՍՀՄ-ի հեռուստադիտողների ամենասիրելի խաղը:

Այժմ հետխորհրդային բոլոր երկրներում, այդ թվում և Հայաստանում այն ինտելեկտուալների, այդ թվում և ուսանողների ամենապահանջված խաղերից մեկն է: Անցկացվում են մրցաշարեր, որտեղ գիտակները (այսպես են անվանում խաղի մասնակիցներին) ցուցաբերում են բազմաբովանդակ գիտելիքներ ժամանակակից աշխարհի մասին, ինչպես նաև արագ, յուրատիպ և տրամաբանորեն մտածելու ունակություն:

Երևանի տարածաշրջանային N2 քոլեջում արդեն 4-րդ տարին է ամեն գարնան անցկացվում են «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ներքոլեջային խաղերը: Խաղերին մասնակցում են քոլեջում առկա բոլոր մասնագիտությունների տարբեր կուրսերից ընտրված 6 հոգանոց թիմեր, որոնք մրցում են իրար հետ գրականությունից, աշխարհագրությունից, պատմությունից, մշակութաբանությունից և, իհարկե, տրամաբանությունից: Ամենադիտարժան եզրափակիչի խաղում մրցում են լավագույն երկու թիմերը, որոնցից ուժեղագույնն էլ դառնում է քոլեջի թիմը: Լավագույն խաղացողները, լավագույն հարցերի հեղինակները և, իհարկե, հաղթող թիմի անդամները պարգևատրվում են քոլեջի տնօրինության կողմից պատվոգրերով և մրցանակներով:

Երկու անգամ քոլեջի թիմը մասնակցել է նաև Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կազմակերպած Երևանի քոլեջների միջև անցկացվող խաղերին, որտեղ զբաղեցրել է պատվավոր երկրորդ հորիզոնականը:

Անցկացվող խաղերը խթանում են ուսանողների նոր գիտելիքների ձգտմանը, նպաստում են թիմային մտածողության ձևավորմանը, որպես արտալսարանային միջոցառումների օրինակներ աշխուժացնում են ներքոլեջային ուսանողական կյանքը՝ ավելի մտերմացնելով ուսանողներին իրար հետ՝ խաղային առողջ մրցակցության ֆոնի վրա:

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԱՇԽԱՐՀ

Երևանի տարածաշրջանային թիվ2 պետական քոլեջի 2302 4-րդ կուրսի ուսանողները ս/թ հունիսի 24-ին ներկայացրին իրենց որոնողական աշխատանքները: Դա մասնագիտական հրաժեշտի միջոցառում էր «Հյուրանոցային աշխարհ» խորագրով:

Ուսանողները ներկայացրին նյութեր ռեստորանների, բարերի, մենյուների, սեղանի սպասքադրման, տուրիզմի, մատուցողների, զբոսաշրջիկների, հյուրանոցային ծառայությունների, հյուրանոցային անձնակազմի, մինի հյուրանոցների, հոսթելների, վճարման միջոցների, սնունդի, էկզոտիկ հյուրանոցների, բարմենի աշխատանքի, հեծանվատուրիզմի, երաժշտական տուրիզմի, ֆոտոտուրիզմի, աստղագիտական տուրիզմի, անհատական տուրերի, հյուրանոցների դասակարգման, ցանցերի կրեատիվ հյուրանոցների, Չիլիի և Չինաստանի, Դուբայի և այլ հյուրանոցների մասին՝ համապատասխան տեսանյութերով:

Հյուրանոցային տնտեսության առաջացումը և զարգացումը խիստ կապված է հասարակության զարգացման հետ: Հյուրընկալության առաջին տները, որոնք ժամանակակից հյուրանոցների նախատիպերն էին, առաջացել են վաղ անցյալում՝ հին արևելյան քաղաքակրթությունում: Ավելի ուշ, հռոմեացիները սկսեցին հյուրընկալության տներ կառուցել Հռոմ այցելող զբոսաշրջիկների համար: Այդ շինությունները կանգնեցնում էին մեծ ճանապարհների մոտ: Դարի կեսերին այս կառույցների ձևավորման և վերակառուցման վրա մեծ ազդեցություն ունեցան կրոնական ավանդույթները: Այդ ժամանակաշրջանում շատացավ ուխտագնացների հոսքը դեպի կրոնական վայրեր: Նրանք հիմնականում հանգրվան էին գտնում եկեղեցիներում, մենաստաններում: Ծառայություններն անվճար էին և դա ազդեց մասնավոր հանգրվանատների զարգացման վրա: Օտար ճամփորդների ազդեցությունն այնքան մեծ էր Աթենքի վրա, որ մ.թ.ա. 4-րդ դարում Քսենոֆոնի հրամանով սկսեցին հյուրանոցներ կառուցվել պետության ծանձարանի հաշվին:

Այժմյան «տուրիստ» և «տուրիզմ» հասկացությունները էապես տարբերվում են հին ժամանակների «ճամփորդ» և «ճամփորդություն» հասկացություններից: Ժամանակակից տուրիզմը բնութագրվում է որպես հանգստի միջոց՝ ուժերը վերականգնելու, առողջությունը ամրապնդելու, ինչպես նաև մարդու այլ կենսական պահանջները բավարարելու համար: Որպես կանոն, ճամփորդության են մեկնում այն մարդիկ, ովքեր ունեն գումար և ազատ ժամանակ: Նման մարդկանց նախկինում անվանում էին «անգործների խավ»: Այս խավին էին պատկանում ազնվականները, հոգևորականները, արհեստագործները և այլն: Նրանց համար ճամփորդությունը իրենց խավային պատկանելությունը ցույց տալու միջոց է եղել:

Հյուրընկալության ոլորտի զարգացման վերջնակետը հյուրանոցն է: «Հյուրանոց» բառը առաջացել է 18-րդ դարում Ֆրանսիայում: Հյուրանոց կոչվեցին բազմաբնակարան շենքերը, որտեղ բնակարանները մեկ օրով, շաբաթով կամ ամսով վարձակալությամբ էին տրվում:

1794թ. ԱՄՆ-ում բացվեց առաջին հյուրանոցը՝ «Սիթի» անվանմամբ: Այն ուներ 70 սենյակ: Առաջին մեկաստղանի հյուրանոցը բացվել է 1829թ.՝ «Տրեմոնտ» անվանմամբ: Այնտեղ անվճար օճառ էին տրամադրում հյուրընկալվողներին: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին բացվեցին 5-աստղանի հյուրանոցներ, որոնք գոհացնում էին նոր միլիոնատերերին և հին արիստոկրատներին:

Միջին դարերում մարդիկ շատ էին ճամփորդում: Այդ պատճառով անհրաժեշտություն առաջացավ կառուցելու ճամփեզրյան պանդոկներ, որոնք գոյատևում են մինչև 19-րդ դարի կեսերը և փոխարինվում մոթելներով:

Հետագայում խոշոր եվրոպական երկրներում հյուրանոցները սկսեցին օգտագործվել նաև այլ նպատակներով: Կազմակերպվում էին կոնֆերանսներ, համաժողովներ, բացվեցին խաղատներ, որոնք հյուրանոցին հսկայական եկամուտ էին բերում:

Այսօր հստակ կարելի է խոսել հյուրանոցային բիզնեսի զարգացման մասին, քանի որ օր օրի կառուցվում են հյուրանոցային նոր համալիրներ, զբոսաշրջային նոր կառույցներ:

Ժամանակի հետ մարդկանց պահանջները կապված հյուրանոցների հետ ավելի բարդանում են: Եթե միջնադարում տուրիստին գոհացնում էր պարզ ու հասարակ սպասարկումը, ծղոտե ներքնակը, ապա այսօր ժամանակակից մարդուն գոհացնելու համար անհրաժեշտ են իդեալական հարմարություններ, բարձրակարգ սպասարկում, լավ պատրաստված անձնակազմ:

Ժամանակի ընթացքում ոչ միայն փոխվել է սպասարկման որակը, այլև հյուրանոցի ներքին ու արտաքին տեսքը: Եթե նախկինում իջևանատները ցածրահարկ, աղքատիկ տեսք ունեցող կառույցներ էին՝շրջապատված քարե պարսպով, ապա այսօր կառուցվում են երկնաքերեր, ճարտարապետական գեղեցիկ լուծումներով հյուրանոցներ, որոնք երբեմն արվեստի գլուխգործոց են հիշեցնում:

Հասնելով համապատասխան բարձունքի, տնտեսությունում ու հասարակական կյանքում զբաղեցնելով կարևոր տեղ, հյուրանոցային գործը զարգացման նոր տեմպեր է արձանագրում: Ամեն օր բացվում են նոր հյուրանոցներ, վերանորոգվում են հները, բարեկարգվում է համարային ֆոնդը, բարելավվում է սպասարկման կուլտուրան:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱ

Ֆրանկոֆոնիա տերմինն առաջին անգամ սկսել է շրջանառվել 1880թ-ին, երբ Ֆրանսիացի աշխարհագրագետ Ռեքլյու Օնեսիմը որոշեց այն օգտագործել ֆրանսախոս մարդկանց խմբի կամ ֆրանսերեն խոսող երկրների խմբի մասին խոսելիս: Այսպիսով, ֆրանկոֆոնիան նախ և առաջ կանայք ու տղամարդիկ են, որոնք կիսում են միմյանց հետ նույն լեզուն: Ըստ վերջին հաշվումների, որը հռչակվել է 2010թ-ին ամբողջ աշխարհում ֆրանկոֆոն են 220 միլիոն մարդ. այսինքն մարդիկ, ովքեր կարդում, գրում և բնականաբար խոսում են ֆրանսերեն:

Երբ խոսում են ֆրանկոֆոնիայի մասին և գրում են այն փոքրատառով, նկատի ունեն մարդկանց, ովքեր խոսում են ֆրանսերեն, իսկ երբ գրում են մեծատառով, նկատի են ունենում ֆրանսախոս երկրների միությունը կամ կազմակերպությունը: Ֆրանկոֆոնիան իրենից ներկայացնում է աշխարհի ֆրանսախոս երկրների համագործակցության միջազգային կազմակերպություն: Այն միավորում է աշխարհի տարբեր պետությունների ավելի քան 56 անդամներ, ինչպես նաև 14 համակրողներ: Կազմակերպության մեջ ընդգրկվելու համար կարևոր պայման է հանդիսանում ոչ թե տվյալ երկրի բնակչության ֆրանսերենի իմացության մակարդակը (չնայած այն ողջունվում է), այլ ավելի շուտ Ֆրանսիայի հետ մշակութային կապերը, որոնք ձևավորվել են դարեր կամ տասնամյակներ ի վեր:

Ֆրանկոֆոնիան ժամանակակից տեսքով գոյություն ունի 1970թ-ից: Կազմակերպության նշանաբանը հենց Ֆրանսիայի նշանաբանն է. Հավասարություն, համերաշխություն և իրար լրացում. Ֆրանկոֆոնիայի դրոշը իրենից ներկայացնում է մի շրջան, որը բաժանված է տարբեր գույների 5 կամարաձև մասերի, Ճիշտայնպես, ինչպիսին է օլիմպիադայի դրոշը, այն ներկայացնում է 5 աշխարհամաս: Ամեն երկրի համար ընտրված գույնը նույնն է բացառությամբ սևի, որը փոխարինվել է մանուշակագույնով: Ֆրանկոֆոնիա անունը սկսել է շրջանառվել 1968թ-ից, որը ունի երկու հիմնական նշանակություն:

Ֆրանկոֆոնիային 14-րդ գագաթնաժողովին,

որը կայացել է Կինշասայում, Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի և Ֆրանկոֆոնիայի գլխավոր քարտուղար Աբդու Դիու Ֆի միջև կնքվել է լեզվաբանական մի որոշում, ըստ որի Հայաստանը ճանաչվել է Ֆրանկոֆոնիայի անդամ:

La Semaine de la Francophonie

Ասույթներ թեյախմության մասին

❑ «I say let the world go to hell, but I should always have my tea». Dostoyevskiy

Թեկուզ աշխարհն էլ կործանվի ես պետք է թեյ խմեմ:

❑ Doing nothing is respectable at tea.

Թեյ խմելու ընթացքում ոչինչ չանելը հարգանքի է արժանի:

❑ A cup of tea is a cup of peace.

Մի բաժակ թեյը մի բաժակ խաղաղություն է:

❑ Tea is drunk to forget the din of the world.

Թեյը խմում են աշխարհի մոայլությունը մոռանալու համար:

❑ Thank God for tea! What would the world do without tea? I am glad I was not born before tea.

Փառք Աստծո, որ թեյը գոյություն ունի: Ինչ էր անելու աշխարհն առանց թեյի: Ես ուրախ եմ, որ չեմ ծնվել թեյի ստեղծումից առաջ:

❑ Never trust a man who, when left alone in a room with a tea cozy, doesn't try it on

Երբեք մի վստահեք այն մարդուն, ով սենյակում միայնակ է մնում թեյի հետ և չի համտեսում այն:

❑ Coffee is not my cup of tea

Սուրճն իմ մի բաժակ թեյը լինել չի կարող:

❑ If man has no tea in him, he is incapable of understanding truth and beauty.

Եթե մարդն իր ներսում չունի թեյ, նա անկարող է հասկանալ ճշմարտությունն ու գեղեցկությունը:

❑ «I always fear that creation will expire before teatime.»-Sidney Smith

Ես ամենաշատը վախենում եմ, որ աշխարհը կկործանվի մինչև թեյի ժամը: Սիդնեյ Սմիթ:

Խորհուրդներ թեյ խմողներին

• Բռնակ ունեցող թեյի բաժակը հարկավոր է բռնել մատերով հետևի և դիմացի մասերից հավասարակշռության համար: Չի կարելի թափահարել թեյի բաժակն օդում: Երբ արդեն բաժակը չի օգտագործվում, հարկավոր է դնել այն տեղը՝ ափսեի մեջ: Միակ դեպքը, երբ հարկավոր է բարձրացնել թեյի ափսեն այն է, երբ , օրինակ, որևէ միջոցառման ժամանակ կանգնած եք: Ճիշտ չէ հանգուցել մատերը բաժակի շուրջը կամ այն պահել ափով:

• Թեյը խառնելու ընթացքում չի կարելի աղմուկ բարձրացնել: Խառնելուց հետո գդալը դրեք մեկ այլ ափսեի մեջ, կամ խնդրեք տան տիրուհուն վերցնել այն: Երբեք մի՛ թողեք թեյի գդալը թեյի մեջ, հատկապես երբ խմում եք այն:

• Թեյը խառնելուց հետո թեյի գդալը հարկավոր է հանել բաժակից ու դնել սկուտեղի վրա և ոչ թե ափսեի, որովհետև անգլիացիները թեյը խմելիս մի ձեռքով բաժակն են բռնում, մյուսով բարձր պահում են ափսեն:

• Մի՛ ավելացրեք շաքարավազ, այն փչացնում է համը, դուք կզգաք միայն շաքարավազի համը և ոչ թեյի: Թեյը գարեջրի պես սուր համ ունի: Եթե կարծում եք, որ ձեզ դուր չի գալիս թեյի համն առանց շաքարի, փորձեք խմել առանց շաքարի երկու շաբաթ և կտեսնեք, որ շաքարը փչացնում է համը և դուք այլևս չեք խմի շաքարով:

ԹԵՅԱԽՄՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՁԵՎՈՎ

Անգլիական մշակույթի ամենակարևոր տարրերից մեկը՝ անգլիական թեյախմությունը, ներկայացնելու համար 2014 - 2015 ուստարում քոլեջում կազմակերպվեցին համանուն խորագրով միջոցառումներ:

Միջոցառման կարևոր նպատակներից էր ուսանողներին ծանոթացնել անգլիական մշակույթի հատկապես թեյախմության հետ և դրանով սեր արթնացնել այդ երկրի, նրա լեզվի ու մշակույթի նկատմամբ: Միջոցառման ընթացքում ուսանողները ներկայացրին թեյի պատմությունը, ցույց տվեցին թե ինչպես է պետք պատրաստել իսկական անգլիական թեյ, ինչպես ճիշտ պահել թեյի բաժակն ու մատուցել այն, ինչպես նաև ներկայացվեցին ոսկե կանոններ, չգրված օրենքներ թեյ խմելու մասին:

Ուսանողները երգեցին անգլիական երգեր թեյի մասին և հյուրասիրեցին թեյ՝ անգլիական ձևով:

Հետաքրքիր փաստեր թեյի մասին

• Թեյի բոլոր տեսակները առաջանում են Camelia Sinesis կոչվող բույսից, սակայն նրանք ունեն տարբեր հոտ ու համ քանի որ անցնում են տարբեր վերամշակումներ: Սև թեյն անցնում է ավելի քան 14 ժամ վերամշակում: Վերամշակման վերջին փուլերում այն դառնում է կարմիր, ապա: 100 աստիճանում բովելուց հետո այն սևանում է ու ստանում արդեն հայտնի հոտը: Իսկ կանաչ թեյն անցնում է ավելի կարճ վերամշակում, այդ պատճառով այն մնում է կանաչ:

• Սկսած 18-րդ դարից՝ Միացյալ Թագավորությունը եղել է յուրաքանչյուր մարդու հաշվով ամենաշատ թեյ օգտագործող երկիրն աշխարհում, ուր յուրաքանչյուր քաղաքացի սպառում է միջինը 1,9 կգ թեյ տարեկան:

• Բրիտանացիների բնակչության թիվը կազմում է 59 մլն մարդ և նրանք ամեն օր խմում են 165 մլն բաժակ թեյ, ընդ որում, բրիտանացիների 98%-ը խմում է կաթով թեյ և նրանցից միայն 30% է թեյի մեջ շաքար ավելացնում:

• Հաշվարկված է, որ Բրիտանիայում սպառվող հեղուկների 40%-ը կազմում է թեյ: Իսկ ընդհանուր առմամբ Անգլիայում սպառվող թեյի 86% խմում են տանը, իսկ 14%-ը դրսում:

• Ի դեպ, անգլիացիներին հատուկ չէ կիտրոնով թեյ խմելը, նրանք այն անվանում են «թեյ ռուսական ձևով» կամ «արտասահմանցիների խենթություն», իսկ սպիտակ թեյը, այսինքն կաթով, խմում են շատ և հաճախ: Բաժակի մեջ լցնում են նախ կաթը: բաժակի քառորդ մասը, իսկ հետո արդեն լավ թրմված ուժեղ թուրմը: Այս սովորույթը անգլիացիների մոտ եկել է մի պարզ պատճառով նրանք վախենում էին, որ ուժեղ թեյի գույնով կփչացնեն իրենց ճենապակյա բաժակները:

Մեր քոլեջում արդեն ավանդույթ է դարձել նշել ֆրանկոֆոնիայի մի ամսյակը: Քոլեջի լեզուների ամբիոնը և ֆրանսերենի դասախոս Ալինա Խուդավերդյանը ջանք չեն խնայում ուսանողներին Ֆրանսիայի մշակույթին ու լեզվին մոտեցնելու գործում: Արդեն իսկ փետրվար ամսից ուսանողների շրջանում նկատվում է աշխուժությունը և հետաքրքրությունը ֆրանսիայի ու նրա մշակույթի նկատմամբ մեծանում է:

Նախորդ տարի ֆրանկոֆոնիայի միամսյակի շրջանակներում մեր ուսանողները ներկայացրեցին ցերեկույթ՝ «Երազանքների երկիր Ֆրանսիա» թեմայով, կայացան գրական ընթերցումներ, որի ընթացքում ուսանողները կարդացին Անտուանդ Սենտ էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» պատմվածքը և մտքեր փոխանակեցին, ծանոթացան Ժակ Պրեվեռի պոեզիային, ներկայացրին ֆրանսիական խոհանոցը, անցկացվեց շնորհանդեսների մրցույթ՝ «Ֆրանսիա» թեմայով, կազմակերպվեց ճանաչողական զրույց-հանդիպում Ֆրանսերեն դասավանդողների ասոցիացիայի նախագահ և Հայաստանում Alliance franaise-ի տնօրեն՝ Սյուզան Քարամյանի հետ, որը ուսանողներին հանգամանորեն պատմեց ֆրանկո ֆոնիայի մասին:

Քոլեջի բոլոր միջոցառումներին ներկա էին հյուրեր տարբեր քոլեջներից և Ֆրանսիայից, որոնցից մեկը՝ ֆրանսիական Գրեֆ կազմակերպության անդամ Ժան Պյուժենն իր ակտիվ մասնակցությունն ունեցավ միջոցառմանը՝ ուսանողների հետ երգելով ու պարելով: Նրա կարծիքը ոգեշնչող էր: Ֆրանկոֆոնիայի միամսյակին ակտիվ մասնակցության համար էլ քոլեջի ֆրանսերենի դասախոս Ալինա Խուդավերդյանը և մի խումբ ուսանողներ քոլեջի տնօրինության կողմից պատվոգրեր ստացան:

Այս տարի ևս միջանցքներում արդեն երևում են կիքառով ու քթի տակ ֆրանսերեն երգող ուսանողներ: Երկար դասամիջոցին որոշ ուսանողներ ճաշարան գնալու փոխարեն ֆրանսերենի կաբինետ են շտապում, որտեղ բուռն քննարկվում են կայանալիք միջոցառման նյութերն ու երգերը: Այս տարի մեր ուսանողները կներկայացնեն ֆրանսիական երգը՝ շանսոնը, կպատմեն ֆրանսիական շանսոնի զարգացման էտապների մասին՝ սկսած Պիաֆից, մինչև մեր օրերը՝ Զազ, Սթրոմե, և իհարկե, մեր շնորհալի ուսանողները կգեղեցկացնեն միջոցառումն իրենց հիանալի կատարումներով: Կարևորը, որ քոլեջում պահպանվում է ավանդույթն ու տարեց-տարի Ֆրանսիայի շունչն ավելի է մեզ մոտենում:

ԻՐԻԿՆԱՀԱՅ

«Օրը մթնեց,
Ժամն է արդեն իրիկնահացի,
Տիրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի...»
Հ. Սահյան

Նա նստել էր իրենց «տան պատից» մի քարի ու պատմում էր մեզ իր «անտուն կյանքի հեքիաթը»...

Ժայռից գլխիվայր կախված մասուր էր «կաթում», իսկ պոետն էլի մեր «ջուրն էր ու ջրաղացը... »

... Եվ բարի՛ եղավ իր վերադարձը...

Հ. Սահյանն այս անգամ «վերադարձավ» մեզ մոտ մարտյան արևի հետ, բացեց իր հողաբույր գանձարանի դռներն ու ասաց.

- Դռները բացե՛ք, գարուն է գալիս...

...Քոլեջի հայոց լեզվի և գրականության կաբինետում «իրիկնահացի» էինք նստել: Մենք՝ գործընկերներով, մեր սաների հետ բացել էինք հանճարեղ Սահյանի՝ «վաղուց կորած մանկության» արահետը, որ տանում էր դեպի «մամուռներում կորած» պոեզիայի աշխարհը:

Հատակին՝ մասրենու շուրջբոլորը փռված վիշապագորգերի վրա, «փաք թանապուր, լավաշ ու

սամիթ» էին «վայելում» քոլեջի մի խումբ լավագույն ուսանողներ՝ հնչեցնելով մեծ բանաստեղծի մանկության, որդիական սիրո, հայրենի սքանչելի բնաշխարհի և պատանեկան թրթռուն զգացմունքների մասին բանաստեղծությունները:

Նրանց խոսքին միահյուսվում էին սահյանական տողերով գրված երգերի մեղեդիները՝ ուղեկցված պարային մանրապատումներով: Ուսանողներին արձագանքում էին դասախոսները՝ կարդալով Սահյանի հասուն սիրո, կարոտների ու «սուրբ տանջանքի» երգերը: Առինքնող ու տպավորիչ էր մթնոլորտը. բանաստեղծի տողերը շարան-շարան պատմում էին իր կյանքի պատմությունը, բաց անում «ոչ մի բառով չասվող» տագնապների վարագույրը, խոստանում, որ նա «միևնույն է, կգա...» և պատգամում՝

... Անվերջ, անսկիզբ այս երթում
Ինձ բացակա չդնե՛ք...

Այնուհետև մթնոլորտն ավելի է ջերմանում: Սահյանի «խնկահոտ» տողերով մեզ են միանում Երևանի տարածաշրջանային թիվ1 պետական քոլեջի սաները և ներդաշնակությունը դառնում է կատարյալ...

Այսպես հաճախ է լինում... Քոլեջի և գրականության կաբինետի պատերը հաճախ են պարուրվում մեծերի խոսք ու մեղեդիով (հետո այդ խոսքը տեղափոխվում է նրանց տուն-թանգարաններ, խնկարկվում նրանց շիրիմների կամ հուշակոթողների կողքին. Ե. Չարենցի կամար և տուն-թանգարան, Զանգակատուն՝ Սևակի տուն-թանգարան, Հայոց մեծերի պանթեոն, Կոմիտասի շիրիմին և այլ): Եվ որ գլխավորն է ուսանողների հոգևոր-մշակութային դաստիարակության ու զարգացման ճանապարհին նրանց հետ համընթաց քայլում, ասմունքում, զրուցում և ապրում ենք մենք՝ իրենց կրթող մարդիկ...



«Ուսուցիչն այն մարդն է, ում մասնագիտությունը ճիշտ վարքն է»

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԵՄԻՆԱ

Ուսումնական գործընթացի կազմակերպման առանցքը եղել և մնում է որակյալ մանկավարժը, ում փորձի, բանիմացության, հմտության ու ճկունության շնորհիվ կրթվում և դաստիարակվում է արժանապատիվ ու բարեկիրթ մարդ և լավ մասնագետ:

Քոլեջի աշխատանքների արդյունավետության հիմքում ևս մասնագետ-մանկավարժների մանկավարժամասնագիտական կարողությունների զարգացումն ու հաստատումն է: Այդ առումով կարևորվում են առավելապես ներքոլեջային այն նախաձեռնությունները՝ մեթոդական աշխատանքների վերլուծություններ, քննարկումներ և սեմինարներ, որոնք կազմակերպվում են լեզուների ամբիոնի առաջատար դասախոսների կողմից: Դրանց մեջ առանձնանում է, հատկապես, 2015թ. հուլիսի 2-ին կայացած «Ընդհանուր մանկավարժություն. ուսուցում, դաստիարակություն» թեմայով սեմինարը, որի նպատակն էր մանկավարժության՝ որպես գիտության, գլխավոր առանձնահատկությունների վերհանումն ու քննարկումը:

Սեմինարի նախաձեռնողները՝ լեզուների ամբիոնի վարիչ, հայոց լեզվի և գրականության դասախոս Լ. Թավաքալյանը, հանրակրթական բաժնի վարիչ, հայոց լեզվի և գրականության դասախոս Ա. Ալեքսանյանը և կարիերայի կենտրոնի պատասխանատու, անգլերենի դասախոս Լ.Ամիրաղյանը, քոլեջի տնօրեն Հրաչյա Գրիգորյանի անմիջական ղեկավարությամբ նախապատրաստել և տպագրել էին մեթոդական ուղեցույց, ուր ներառված էին ավանդական և ժամանակակից մանկավարժության այն հիմնական սկզբունքներն ու մոտեցումները, որոնց տիրապետումն անհրաժեշտ է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդողների, հատկապես, ոչ մանկավարժական կրթություն ունեցողների համար:

Սեմինարին մասնակցում էին քոլեջի ղեկավարները, ողջ դասախոսական անձնակազմը, ինչպես նաև համագործակցային քոլեջների՝ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի, Թեթև արդյունաբերության քոլեջի և թիվ 4 ուսումնարանի դասախոսները:

Սեմինարավարներ Լ. Թավաքալյանը, Ա. Ալեքսանյանը և Լ. Ամիրաղյանը կառուցողական ուսուցման մեթոդների կիրառմամբ ներկաներին ծանոթացրին մանկավարժության երկու բաժինների՝ ուսուցման և դաստիարակության բովանդակությանը, սկզբունքներին և առանձնահատկություններին: Ներկաները առանձնակի հետաքրքրությամբ քննեցին, հատկապես, ակտիվ ուսումնառության մեթոդները՝ կարևորելով դրանց դերը դասի արդյունավետ կազմակերպման գործում: Նրանք հարուստ բաշխման նյութի, ցուցադրությունների, տեսաֆիլմերի միջոցով վարեցին աշխույժ քննարկում՝ վերլուծելով տարբեր իրավիճակներ, շեշտադրելով մանկավարժա հոգեբանական հմտության կարևորությունը ուսումնական գործընթացի, մանավանդ պատանիների ներաշխարհի, բարոյահոգեբանական կերտվածքի, աշխարհայացքի ձևավորման գործում:

Դասախոսը ամենից առաջ մանկավարժ է, ով, շփվելով դեռահասների հետ, պարտավոր է տիրապետել դաստիարակչական ներգործության մեթոդներին ու ձևերին, իմանալ դաստիարակության գործընթացի առանձնահատկությունները և հոգեբանական հիմունքները՝ հենվելով մանկավարժության գիտական հիմքի վրա և տիրապետելով արդի մանկավարժական տեսությունների ընդհանուր սկզբունքներին:

Այդ առումով սեմինարը չափազանց արդյունավետ էր, ուսանելի, հետաքրքիր, ուներ կազմակերպվածության բարձր մակարդակ և, իհարկե, կկրի շարունակական բնույթ: